ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2022 թվականի N 678-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 1428-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի դ.10-րդ ենթակետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի «Մանուկների և պատանիների՝ ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար անհրաժեշտ պայմանների նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 1428-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«5. Մարզադպրոց ընդունվող երեխաների նվազագույն տարիքն ըստ մարզաձևերի սահմանել՝

NN ը/կ	Մարզաձևը	Ընդունման տարիքը
1.	Սպորտային մարմնամարզություն (աղջիկներ և տղաներ), գեղարվեստական մարմնամարզություն, գեղասահք, շախմատ	5 տարեկան

2.	Սեղանի թենիս, սպորտային ակրոբատիկա, սպորտային պարեր, լող, ջրացատկ, ֆուտբոլ, շաշկի	6 տարեկան
3.	Աթլետիկա, ըմբշամարտ, ձյուդո, սամբո, լեռնադահուկային սպորտ, բասկետբոլ, բադմինթոն, դահուկավազք, մականախաղ	7 տարեկան
4.	Ձրագնդակ, վոլեյբոլ, ձեռքի գնդակ, սուսերամարտ, բոնցքամարտ, թիավարություն	8 տարեկան
5.	Հեծանվային սպորտ, առագաստանավային սպորտ, ձիասպորտ, հրաձգություն, բիաթլոն	9 տարեկան
6.	Նետաձգություն, տրիաթլոն, ծանրամարտ (տղաներ)	10 տարեկան
7.	Ծանրամարտ (աղջիկներ)	11 տարեկան

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

13.05.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ